ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ N 4

Դատական դեպարտամենտի կարիքների համար համազգեստի
ձեռքբերման նպատակով կազմակերպված «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08» ծածկագրով
գնման ընթացակարգի գնահատող հանձնաժողովի նիստի

ք. Երևան

«18» մայիսի 2026թ.
Ժամը՝ 11:00

Մասնակցում էին՝

հանձնաժողովի նիստը նախագահող՝

Արթուր Ասատրյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության պետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի անդամներ՝

Լևոն Դավթյան՝ Դատական կարգադրիչների ծառայության արագ արձագանքման և վերլուծական բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Վահագն Ֆահրադյան՝ Դատական կարգադրիչների ծառայության արագ արձագանքման և վերլուծական բաժնի պետի տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար

Նորայր Աղամալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի պետի ժամանակավոր պաշտոնակատար

Տիգրան Զեյնալյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Նյութատեխնիկական ապահովման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

հանձնաժողովի քարտուղար՝

Գայանե Դադիվանյան՝ Դատական դեպարտամենտի նյութատեխնիկական ապահովման և գնումների համակարգման վարչության Գնումների համակարգման բաժնի գլխավոր մասնագետի ժամանակավոր պաշտոնակատար

Նիստից բացակայում էր՝

Սուքիաս Գրիգորյան՝ Դատական կարգադրիչների ծառայության պետի առաջին տեղակալի ժամանակավոր պաշտոնակատար, Դատական կարգադրիչների ծառայության պետ, Դատական դեպարտամենտի ղեկավարի տեղակալի պարտականությունները կատարող

Համաձայն ՀՀ կառավարության 2017թ. մայիսի 4-ի N 526-Ն որոշմամբ հաստատված «Գնումների գործընթացի կազմակերպման» կարգի 26-րդ կետի 1-ին ենթակետի՝ նիստը նախագահում է Արթուր Ասատրյանը:

1. Տեղեկատվություն՝ «ԴԴ-ԷԱՃԱՊՁԲ-26/08» ծածկագրով գնման ընթացակարգի շրջանակում Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտում արձանագրված՝ հրավերի պահանջների նկատմամբ անհամապատասխանության շտկման և հայտի գնահատման արդյունքի վերաբերյալ.

Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ն հրավերով սահմանված կարգով և ժամկետում շտկել է հայտում արձանագրված անհամապատասխանությունը:

Հանձնաժողովը որոշեց.

Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ի կողմից ներկայացված հայտը, այդ թվում eauction.armeps.am համակարգում (այսուհետ՝ Համակարգ) մուտքագրված (լրացված) առաջարկվող ապրանքների ամբողջական նկարագրերը գնահատել բավարար:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

2. Տվյալներ՝ ընտրված մասնակիցների և մերժված հայտերի վերաբերյալ.

2.1. Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2017 թվականի մայիսի 18-ի N 534-Ն որոշմամբ հաստատված «Էլեկտրոնային աճուրդի իրականացման» կարգի 10-րդ կետի 2-րդ ենթակետով՝ հանձնաժողովը որոշեց.

- 1-ին, 2-րդ, 13-րդ չափաբաժինների մասով «Արմինե Հովսեփյան Էլբեկի» Ա/Ձ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 11-րդ, 12-րդ, 15-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 22-րդ չափաբաժինների մասով Քանաքեռի կարի ֆաբրիկա ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից,

- 14-րդ, 16-րդ, 17-րդ, 21-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ չափաբաժինների մասով Տեքստիլ Փիփ ՍՊԸ-ին հայտարարել ընտրված մասնակից:

- 1-ին, 2-րդ, 3-րդ, 4-րդ, 5-րդ, 6-րդ, 7-րդ, 8-րդ, 9-րդ, 10-րդ, 12-րդ, 13-րդ, 14-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 19-րդ, 20-րդ, 21-րդ, 22-րդ, 23-րդ, 24-րդ, 25-րդ, 26-րդ, 27-րդ չափաբաժինների մասով Համակարգի կողմից մերժված չհամարված մյուս մասնակիցների հայտերը մերժել:

2.2. 1-ին, 2-րդ, 4-րդ, 6-րդ, 8-րդ, 13-րդ, 15-րդ, 16-րդ, 17-րդ, 18-րդ, 26-րդ չափաբաժինների մասով այն մասնակիցների հայտերը, ում կողմից աճուրդն ամփոփվելու պահին ներկայացրած գները գերազանցել են սույն ընթացակարգի շրջանակում գնվելիք ապրանքների համար գնման հայտով սահմանված գնման գները, Համակարգի կողմից համարվել են մերժված:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

3. Հանձնաժողովը որոշեց՝ գնումների մասին ՀՀ օրենսդրության պահանջների համաձայն, հրավերով սահմանված կարգով, ընտրված մասնակիցների հետ կնքել պայմանագրեր:

Ընդունվել է որոշում. կողմ՝ 5, դեմ՝ 0:

Հանձնաժողովի

Նիստը նախագահող՝ _____ Արթուր Ասատրյան

Անդամներ՝

_____ Լևոն Դավթյան

_____ Վահագն Ֆահրադյան

_____ Նորայր Աղամալյան

_____ Տիգրան Զեյնալյան

Քարտուղար՝ _____ Գայանե Դադիվանյան